ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք.Իջևան «19» 01 2023թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի որը գործում է կանոնադրության հիման վրա, և «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Դպրոց), ի դեմս Դպրոցի գործադիր տնօրեն Նաիրա Դալուզյանի, որը գործում է Դպրոցի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների սահմանումն է:

1.2. Կողմերը, համապատասխանաբար կնքելով սույն համագործակցության հուշագիրը, ամրագրում են սահմանված նպատակի հասնելուն ուղղված իրենց պատրաստակամությունը: Սույն հուշագիրը միջոցների հատկացման պարտավորագիր չէ: Այն ցանկացած Կողմի համար օրենքով պարտադրվող պարտավորություն չի համարվում, կամ իրավունքներ չի տրամադրում որևէ այլ Կողմի համար:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

2.2.1. ուսանողների մասնակցությամբ կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,

2.2.2. համատեղ ծրագրերի իրականացում,

2.2.3. ուսանողների պրակտիկաների կազմակերպում և անցկացում,

2.2.4. համատեղ ժողովների կազմակերպում,

2.2.5. ԵՊՀ ԻՄ և Դպրոցի գործունեության լուսաբանման նպաստում,

2.2.6. ծրագրերի իրականացմանն ուղղված երիտասարդների հավաքագրմանը, տեխնիկական միջոցների տրամադրմանը, տեղեկատվության տարածման աջակցում,

2.2.7. ԵՊՀ ԻՄ ուսանողների ներառումը Դպրոցի կադրային բազայում,

2.2.8. սույն Հուշագրի շրջանակներում այլ գործողությունների իրականացում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- պարտաճանաչություն,
- որակի վերահսկում
- փոխըմբռնում և փոխզիջում,

- թափանցիկություն,
- համագործակցություն:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2. Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

4.3. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

4.4. Սույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

4.5. Սույն Հուշագիրը կնքվում է երկու բնօրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան ՈՒսանողական 3 **Տնօրենի պաշտոնակատար՝** Ա. Մակարյան Կ.Տ.	Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ Հասցե՝ Տավուշի մարզ, Դիլիջան Մոլդովական փող., 77 շենք **Գործադիր տնօրեն** Ն. Դալուզյան Կ.Տ.